

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ
Մայիսի 18–31, 2021թ.

Հունիսի 8, 2021թ.

I. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ

- Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունները կկայանան 2021թ. հունիսի 20-ին: Արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման մասին որոշումը կայացվել է Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմի դադարեցման նպատակով 2020թ. նոյեմբերի 9-ին կնքված հրադադարի հայտարարությանը հաջորդած հակակառավարական ցույցերից հետո:
- Ընտրողները կընտրեն առնվազն 101 պատգամավոր՝ հնգամյա ժամկետով, մեկ համապետական ընտրատարածքում՝ նոր ներդրված փակ համամասնական ցուցակի համակարգով: Համակարգը ներառում է անցողիկ շեմ և լրացուցիչ մանդատներ, ինչի նպատակը կայուն մեծամասնության երաշխավորումն է՝ միաժամանակ ընդդիմության համար ապահովելով մանդատների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի չափով ներկայացվածություն: 2021թ. ապրիլին ընդունված՝ նախկինում գործող երկաստիճան համամասնական համակարգի փոփոխությունը, որով թեկնածուներն ընտրվում էին միասնական ազգային ցուցակով և 13 բաց տարածքային ցուցակներով, աջակցության է արժանացել շատ քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից:
- Ընտրությունները կանցկացվեն 2016թ. ընդունված և, ընտրություններից կարճ ժամանակ առաջ, տարածքային ցուցակները վերացնելու և այլ դրույթներ համապատասխանեցնելու համար 2021թ. ապրիլին փոփոխված ընտրական օրենսգրքի համաձայն: Մայիս ամսին ընդունված փոփոխությունների ավելի լայն փաթեթը ուժի մեջ կմտնի 2022թ. և չի վերաբերում այս ընտրություններին:
- Ընտրությունների վարչարարությունն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ), 38 տարածքային ընտրական հանձնաժողովների (տարածքային ԸՀ) և 2008 տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) կողմից: ԿԸՀ-ն մինչ օրս պահպանել է օրենքով սահմանված բոլոր վերջնաժամկետները, կազմակերպել է կանոնավոր բաց քննարկումներ, և ԿԸՀ որոշումները ճիշտ ժամանակին առցանց հրապարակվել են: ԿԸՀ գործողությունների ծրագրում հաշվի են առնվում ընտրությունների կազմակերպման սեղմ ժամկետները, ինչը նկատելի է ՏԸՀ անդամների համար դասընթացներից և ընտրական նոր ընթացակարգերի վերաբերյալ ընտրողների իրազեկվածության բարձրացման ընթացակարգերից:

- Ընտրողների ցուցակը կազմվում է Բնակչության պետական ռեգիստրի հիման վրա, որը վարում է ՀՀ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունը, և որը ներառում է շուրջ 2.6 միլիոն ընտրող և ՀՀ –ում միջտապես բնակվող ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ: Ընտրությունների օրը ընտրողների անձը նույնականացվելու է Ընտրողների նույնականացման սարքերի (ԸՆՍ) միջոցով: 2017թ. ներդրված ԸՆՍ-ներն օգնում են կանխել բազմակի քվեարկության և այլ անձի փոխարեն քվեարկելու ճանապարհով հնարավոր ընտրական խարդախությունները: Ըստ ԿՀՀ-ի՝ ԸՆՍ-ները զգալիորեն բարելավել են ընտրողների նույնականացման գործընթացի արդյունավետությունը ի համեմատ նախորդ տարիների թղթային մեթոդի:
- Խորհրդարանական ընտրությունների համար քաղաքական կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները ԿՀՀ են ներկայացնում իրենց թեկնածուների ցանկը: Ընտրական օրենսգիրքը սահմանում է 30 տոկոս գենդերային քվոտա: Մայիսի 31-ին ԿՀՀ-ն գրանցել է թեկնածուների ցանկ ներկայացրած 22 քաղաքական կուսակցություն և 4 դաշինք: Տասներկու տարբեր թեկնածուների ցանկից ԿՀՀ-ն մերժել է քսանվեց անհատ թեկնածուի: Ազգային փոքրամասնությունների համար նախատեսված չորս տեղի համար չորս կուսակցություններ և դաշինքներ գրանցել են թեկնածուներ:
- Այս արտահերթ ընտրությունների պաշտոնական քարոզարշավը կտևի 12 օր՝ հունիսից 7-ից մինչև հունիսի 18-ը: Քարոզարշավի միջոցները՝ ինչպիսիք են հեռուստատեսային հոլովակները, վահանակները և պաստառները, արդեն տեսանելի են և չնայած COVID համավարակին, ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության երկարաժամկետ դիտորդները և զրուցակիցները զեկույցել են, որ երկրի ամբողջ տարածքում տեղի են ունենում անձնապես քարոզարշավային աշխատանքներ: Նախաքարոզարշավային շրջանում ազգային անվտանգության հետ կապված հարցերը գերակա դիրք են զբաղեցնում քաղաքական դիսկուրսում:
- Օրենքը նախատեսում է քարոզարշավի մասնավոր և հանրային ֆինանսավորում և ներդրումների ու ծախսերի մասով դնում է սահմանափակումներ: Մրցակցող կուսակցություններից և դաշինքներից պահանջվում է բացել հատուկ բանկային հաշիվ իրենց քարոզարշավի ֆինանսավորման գործարքների համար և ներկայացնել երկու զեկույցներ քարոզարշավի եկամուտների և ծախսերի վերաբերյալ՝ առաջինը ընտրությունից 10 օր առաջ, երկրորդը՝ 10 օր հետո: Չեկույցներ պետք է հրապարակվեն ԿՀՀ կայքում: Քարոզարշավի ֆինանսների վերահսկման համար պատասխանատու է ԿՀՀ - Վերհսկիչ-վերստուգիչ ծառայությունը:
- ՋԼՄ միջավայրը բազմազան է և ներառում է մեծաքանակ լրատվամիջոցներ, սակայն տարբեր հեռարձակողների քաղաքական ուղղվածությունը ընտրությունների կողմնակալ լուսաբանման վտանգ է առաջացնում: Թեպետ հեռուստատեսությունը շարունակում է մնալ քաղաքական տեղեկատվության ամենակարևոր աղբյուրը՝ սոցիալական ցանցերի դերն արագորեն աճում է: Օրենքը մրցակից քաղաքական կուսակցությունների և դաշինքների համար ապահովում է անվճար հեռարձակման հնարավորություն հանրային հեռարձակողներով և թույլ է տալիս նրանց գովազդ գնել

հանրային և մասնավոր ՁԼՄ-ներում: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը կվերահսկի քարոզարշավի ընթացքում ՁԼՄ համապատասխանելիությունը օրենքին՝ այդ թվում մեղիա մշտադիտարկում իրականացնելով:

- Ընտրական բողոքների մեծ մասը կարող են ներկայացվել ավելի բարձր մակարդակի ընտրական հանձնաժողովներ կամ դատարաններ: Հիմնականում բողոքարկման իրավունքը վերապահվում է միայն նրանց, ում սուբյեկտիվ ընտրական իրավունքը խախտվել է կամ կարող է խախտվել: Թեպետ ոչ մի ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության գրուցակից մինչ այժմ չի հայտնել նախընտրական բողոքների և գանգատների վարման շուրջ մտահոգություն, ումանք նշել են, որ ընտրությունների արդյունքների ամփոփման համար յոթնօրյա վերջնաժամկետը սահմանափակում է հետընտրական վեճերի հանգուցալուծման հնարավորությունը: ԿԸՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ին, որ մինչ այժմ որևէ բողոք չի ստացել: Վարչական դատարանը մինչ այժմ դիմում է ստացել երկու հավանական թեկնածուից:
- Իրավական դաշտը ապահովում է միջազգային և տեղական դիտորդների դիտորդական գործունեություն և իրավունք է ընձեռում կուսակցությունների վստահված անձանց ներկա լինել ընտրատեղամասերում: Որոշ ՔՀԿ դիտորդների խմբեր մտահոգություն են հայտնել, որ վաղ՝ ընտրությունների օրվան նախորդող 15-օրյա հավատարմագրման վերջնաժամկետը, դժվարություններ է ստեղծում դիտորդներ հավաքագրելու առումով:
- ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության աշխատանքը մեկնարկել է մայիսի 18-ին և ներկայացված է 11 հոգուց բաղկացած հիմնական խմբով Երևանում և 26 երկարաժամկետ դիտորդներով՝ երկրի ամբողջ տարածքում:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅ ՈՒՆ

ՀՀ իշխանությունների հրավերով և հիմնվելով 2021թ. ապրիլի 28-ից 30-ը իրականացված Կարքիների գնահատման առաքելության արդյունքների վրա, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) մայիսի 18-ին մեկնարկել է Դիտորդական առաքելություն (ԴԱ):¹ Օուեն Մերֆիի ղեկավարությամբ առաքելությունը կազմված է Երևանում տեղակայված 11 անդամներից բաղկացած հիմնական անձնակազմից և 26 երկարաժամկետ դիտորդներից, որոնք մայիսի 27-ին տեղակայվել են երկրի տարբեր մասերում: Առաքելության անդամները ԵԱՀԿ մասնակից 21 երկրներից են: ԺՀՄԻԳ-ը դիմել է ԵԱՀԿ անդամ երկրներին ընտրության օրվա ընթացքը դիտարկելու համար 250 կարճաժամկետ դիտորդներ առաջադրելու խնդրանքով: ԺՀՄԻԳ-ը Հայաստանում նախկինում դիտարկել է տասնմեկ ընտրություն:

III. ՆԱԽԱԴՐՅ ԱԼ ՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏ ԵՔՍՏ

2021թ. մարտի 18-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ հունիսի 20-ին անցկացվելու են արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Նա հրաժարական է

¹ Տես նախկին [ԺՀՄԻԳ-ի Հայաստանի ընտրությունների վերաբերյալ զեկույցները](#)

տվել ապրիլի 25-ին՝ օրինական ժամկետների պահպանմամբ, և մայիսի 10-ի նախագահի հրամանագրով նշանակվել են ընտրություններ: Արտահերթ ընտրություններ անցկացնելու որոշումը կայացվել է 2020թ. նոյեմբերին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ Ադրբեջանի հետ հրադադարի մասին հայտարարության ստորագրմանը հաջորդած հակակառավարական բողոքների արդյունքում: Հրադադարի մասին հայտարարությունը հաջորդել է Լեոնային Ղարաբաղում և դրա շուրջ 44-օրյա պատերազմին: Ի լրումն վերջերս տեղի ունեցած պատերազմին և շարունակվող լարվածությանը, նախընտրական միջավայրի վրա ազդել է նաև տնտեսական անկումը, որը սրվել է Covid-19 համավարակով պայմանավորված:

Ամենավերջին խորհրդարանական ընտրությունները եղել են 2018թ. դեկտեմբերին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունները: Ընտրությունները հետևել են վարչապետ պարոն Փաշինյանի հրաժարականին, ով այդ պաշտոնը ստանձնել էր նույն տարվա մայիս ամսին: Պարոն Փաշինյանը նշանակվել էր վարչապետ Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո՝ ԱԺ ձայների մեծամասնությամբ: Պարոն Սարգսյանի Հանրապետական կուսակցությունը հաղթել էր 2017թ. ապրիլյան խորհրդարանական ընտրություններում, սակայն մեկ տասնամյակ որպես նախագահ պաշտոնավարելուց հետո վերջինիս նշանակումը վարչապետի պաշտոնում 2018թ. ապրիլին ուղեկցվեց բողոքներով և հանգեցրեց նրա հրաժարականին: 2018-թ. դեկտեմբերին կայացած արտահերթ ընտրություններում ձայների 70,4 տոկոսով հաղթել է պարոն Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գլխավորած «Իմ Քայլը» դաշինքը՝ ստանալով խորհրդարանի 132 մանդատներից 88-ը: «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները խորհրդարանում մանդատներ ստացած միակ այլ կուսակցություններն էին՝ համապատասխանաբար 26 և 18 մանդատով:

Կանայք թերնեկայացված են պետական պաշտոններում՝ կազմելով հեռացող խորհրդարանի 24 տոկոսը՝ մեկ նախարարական պաշտոն, և ոչ մեկը տասը մարզերի մարզպետների պաշտոններից:

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ և ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Խորհրդարանական ընտրությունները կարգավորվում են 1995թ. Սահմանադրությամբ (որը վերջին անգամ փոփոխության է ենթարկվել 2015թ. Հանրաքվեով), 2016թ. Ընտրական օրենսգրքով և այլ օրենքներով:² Հայաստանը հանդիսանում է ժողովրդավարական ընտրություններին վերաբերող հիմնական միջազգային պայմանագրերի կողմ:³

² Ինչպես նաև «Կուսակցությունների մասին» օրենքով, «Հավաքների ազատության մասին» օրենքով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով և ՀՀ քրեական օրենսգրքով:

³ Ներառյալ 1950թ.-ի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), 1965թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, 1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), 2003թ. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան և 2006թ. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (CRPD): Հայաստանը նաև անդամակցում է Եվրոպայի խորհրդի Հանուն

Ընտրական օրենսգիրքն ընդունվել է 2016 թ., որից հետո մի քանի անգամ ենթարկվել է փոփոխությունների:⁴ Առաջարկվող ընտրական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկումը սկսվել է 2020 թ. և հիմնականում ընկալվել է որպես ներառական: 2021 թվականի ապրիլի 1-ին, արտահերթ ընտրությունների նշանակումից անմիջապես առաջ, հեռացող խորհրդարանն ընդունել է մի շարք փոփոխություններ, որոնցով վերացել են թեկնածուների տարածքային ցուցակները:⁵ Անցումը մեկ փակ համապետական ցուցակով ընտրական համակարգի ի թիվս այլ ընթացակարգային փոփոխությունների պահանջել է փոփոխություններ թեկնածուների առաջադրման և գրանցման, մանդատների բաշխման, ինչպես նաև քվեարկության օրվա ընթացակարգերում: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ գրուցակիցներ տեսակետ են հայտնել առ այն, որ այդ փոփոխությունների ուշ ընդունումը ավելի քիչ ժամանակ է թողնում գալիք ընտրությունները կազմակերպելու համար. փոփոխությունների արդյունքում ԿԸՀ-ն մեկ ամիս ժամանակ է ունեցել իր բոլոր համապատասխան կանոնակարգերը փոփոխված Ընտրական օրենսգրքին համապատասխանեցնելու համար:⁶ Անցումը մեկ համապետական ընտրատարածքի աջակցություն է ստացել շատ քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Փոփոխություններն ընդունվել են խորհրդարանի 132 պատգամավորների 82 ձայների մեծամասնությամբ: «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները չեն մասնակցել քվեարկությանը: 2021 թվականի մայիսին ընդունվել է փոփոխությունների երկրորդ՝ ավելի համապարփակ փաթեթը: Այդ փոփոխությունները կիրառելի չեն այս ընտրություններում, քանի որ դրանք ուժի մեջ կմտնեն 2022 թվականի հունվարի 1-ից:⁷ Մինչև խորհրդարանի կողմից փոփոխությունների երկու փաթեթների վերջնական պաշտոնական ընդունումը, ընտրական շահառուների համար անորոշ էր, թե որ փոփոխություններ են կիրառվելու սույն ընտրություններում:

Ժողովրդավարության օրենքի միջոցով Եվրոպական հանձնաժողովին (Վենետիկի Հանձնաժողով) և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբին (ԳԲԵԿՈ):

⁴ 2018 թ. Ընտրական օրենսգրքի և խորհրդարանական ընտրություններին վերաբերող այլ օրենքների փոփոխություններով, ի թիվս այլ կարգավորումների, ներդրվել են միջոցներ պետական ռեսուրսների չարաշահման դեմ, վերացվել են ընտրություններին ՋԼՄ ներկայացուցիչների հավատարմագրման սահմանափակումները և սահմանվել են ավելի մեծ պատժամիջոցներ ընտրական իրավախախտումների համար:

⁵ Հանրապետության Նախագահը հրաժարվել է ստորագրել այս փոփոխությունները՝ նշելով, թե որքան մոտ է այս փոփոխությունների ընդունումը ընտրության առաջարկվող օրվան: Նախագահի ստորագրության համար սահմանադրորեն սահմանված 21-օրյա ժամկետի ավարտից հետո փոփոխությունները ստորագրվել են խորհրդարանի նախագահի կողմից և օրինական ուժի մեջ են մտել 2021 թվականի ապրիլի 27-ին:

⁶ ԿԸՀ-ն տեղեկացրել է ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իր ցուցումները ժամանակին թարմացնելու համար հանձնաժողովը ստիպված է եղել գործընթացը սկսել օրենքի նախագծի հիման վրա՝ չիմանալով, թե որ դրույթներն է ի վերջո ընդունելու խորհրդարանը:

⁷ Այս փոփոխությունները ներառում են թեկնածուների գրանցմանն առնչվող դրույթների փոփոխություններ, այդ թվում՝ ընտրական գրավի չափը և վերադարձի կարգը, քարոզչության կանոնների և քարոզչության ֆինանսավորման կարգավորումների նոր դրույթներ, ինչպես նաև ընտրություններ կազմակերպող և անցկացնող մարմնի գործունեությունը կարգավորող դրույթներ:

Առաջիկա ընտրություններում ընտրողներն ընտրելու են առնվազն 101 պատգամավոր՝ մեկ համապետական ընրատարածքի փակ ընտրական ցուցակներով համամասնական համակարգով, որը փոխարինել է նախորդ երկաստիճան համամասնական համակարգին, երբ թեկնածուներն ընտրվում էին մեկ փակ համապետական և 13 բաց տարածքային ընտրական ցուցակներից: Տարածքային ցուցակներով համակարգի վերացումը լայն աջակցություն է ստացել քաղաքական և քաղաքացիական հասարակության շատ դերակատարների կողմից:⁸ Պատգամավորներն ընտրվելու են հինգ տարի ժամկետով:

Խորհրդարանում մանդատներ ստանալու համար կուսակցությունները պետք է հաղթահարեն 5%-ի, իսկ երկու կամ ավելի կուսակցությունների դաշինքները՝ 7%-ի շեմը: Պատգամավորների 4 մանդատ բաշխվում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչների միջև՝ առավել մեծ թվով չորս ազգային փոքրամասնություններից (եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր)⁹ յուրաքանչյուրին մեկ մանդատ սկզբունքով: Յուրաքանչյուր կուսակցություն կամ դաշինք կարող է առաջադրել մինչև չորս թեկնածու՝ ազգային փոքրամասնություններին վերապահված չորս մանդատներից յուրաքանչյուրի համար:

Ըստ Սահմանադրության, կառավարություն կազմելու համար անհրաժեշտ է կայուն խորհրդարանական մեծամասնություն (մանդատների ընդհանուր թվի 54%-ի չափով): Եթե հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանում է մանդատների ընդհանուր թվի առնվազն 50 գումարած մեծ տոկոսը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա կուսակցությունը կամ դաշինքը ստանում է այնքան լրացուցիչ մանդատներ, որքան անհրաժեշտ է կայուն մեծամասնություն ձևավորելու համար:¹⁰ Եթե ընտրությունների արդյունքում ոչ մի կուսակցություն կամ դաշինք չի ստանում մանդատների 50 գումարած մեկ տոկոսը, և քվեարկության արդյունքների ամփոփումից հետո վեց օրվա ընթացքում քաղաքական կոալիցիա կազմելու ճանապարհով կայուն մեծամասնություն չի ձևավորվում, անցկացվում է ընտրությունների երկրորդ փուլ՝ երկու առավելագույն ձայներ ստացած թեկնածուական ցուցակների միջև ընտրությունների օրվանից հետո՝ 28-րդ օրը: Երկրորդ փուլ անցած երկու մրցակիցներին թույլատրվում է նոր դաշինքներ կազմել առաջին փուլի մասնակից մյուս կուսակցությունների հետ:

⁸ Տե՛ս [Վենետիկի հանձնաժողովի ու ԺՀՄԻԳ-ի հրատապ համատեղ կարծիքը Հայաստանի Ընտրական օրենսգրքում և հարակից օրենսդրությունում փոփոխություններ կատարելու վերաբերյալ](#):

⁹ Հիմք ընդունելով վերջին մարդահամարը, որն անցկացվել է է 2011թ.ն: Հայաստանը էթնիկապես զգալիորեն միատարր է: Բնակչության ավելի քան 98 տոկոսը ինքնորոշվում է որպես հայ: Եզդիներին բաժին է ընկնում բնակչության 1.1 տոկոսը, ռուսներին՝ 0,3 տոկոսը, իսկ ասորիներին և քրդերին՝ յուրաքանչյուրին 0,1 տոկոսից պակաս:

¹⁰ Ընտրական օրենսգրքը նախատեսում է նաև, որ եթե հաղթող կուսակցությունը կամ կոալիցիան ստացել է խորհրդարանի մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին, ապա անցողիկ շեմը հաղթահարած ավելի փոքր կուսակցությունները և դաշինքները ստանում են այնքան լրացուցիչ մանդատներ, որ արդյունքում նրանց մանդատների ընդհանուր թիվը լինի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս:

V. ԸՆՏ Ր ՈՒԹՅ ՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉ ԱՐԱՐ ՈՒԹՅ ՈՒՆ

Ընտրական վարչարարությունն իրականացվում է եռաստիճան համակարգով, որը կազմված է ԿԸՀ-ից, 38 տարածքային ընտրական հանձնաժողովներից (տարածքային ԸՀ) և 2008 տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ): Համաձայն օրենքի՝ ԿԸՀ և տարածքային ԸՀ-ները պետք է ներառեն յուրաքանչյուր սեռի առնվազն երկու ներկայացուցիչ:¹¹ ԿԸՀ-ն մշտապես գործող մասնագիտական մարմին է՝ կազմված յոթ անդամներից, ովքեր ընտրվում են վեցամյա ժամկետով Ազգային ժողովի քվեարկության արդյունքում պատգամավորների ձայների երեք հինգերորդով, առավելագույնը երկու՝ իրար հաջորդող ժամկետով:¹² ԿԸՀ-ն իր ներկա կազմով ընտրվել է 2016 թ. հոկտեմբերին:¹³

Ըստ ընտրական օրենսգրքի, ԿԸՀ-ն ընտրությունների անցկացման ողջ գործընթացի պատասխանատու մարմինն է և ունի լիազորությունների և պարտականությունների լայն շրջանակ, ինչպիսիք են ընտրական գործընթացի վերաբերյալ որոշումների ընդունումը, ցուցումներ տալը և պարզաբանումներ տրամադրելը՝ այդ թվում նաև COVID-ի հետ կապված ընթացակարգերի շուրջ:¹⁴ ԿԸՀ-ն մինչ օրս հետևել է օրենքով սահմանված բոլոր իրավական վերջնաժամկետներին, կազմակերպել է ուղիղ եթերով հեռարձակվող բաց քննարկումներ, որոնց մասնակցել են դիտորդներ, ՋԼՄ ներկայացուցիչներ և կուսակցությունների վստահված անձիք: ԿԸՀ գործողությունների ծրագրում հաշվի է առնվում արտահերթ ընտրությունների անցկացման համար սեղմ ժամկետները, ինչը նկատելի է դառնում ՏԸՀ անդամների համար տարվող դասընթացներից և ընտրական նոր ընթացակարգերի վերաբերյալ ընտրողների իրազեկվածության արշավից: ԿԸՀ-ի կողմից կազմվել են համապատասխան ընտրական ընթացակարգերի վերաբերյալ (ներառյալ չորս ազգային փոքրամասնությունների լեզուներով, ինչպես նաև տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված) նյութեր:

ԿԸՀ-ն տեղեկացրել է ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությանը, որ ինչպես և նախկին ընտրությունների ժամանակ, այս անգամ ևս նախատեսում են ամենամեծ 1500 ընտրատեղամասերում տեղադրել տեսախցիկներ, որոնցով քվեարկության և հաշվարկման գործընթացը հասանելի կլինի ուղիղ հեռարձակմամբ: ԿԸՀ-ն հաստատեց, որ այս տեսագրությունները կարող են պահանջվել ընտրական բողոքներ ներկայացնելիս և կարող են օգտագործվել որպես ապացույց:

Տարածքային ԸՀ-ները հանդիսանում են յոթ անդամներից կազմված մշտապես գործող մասնագիտական մարմիններ, որոնք նշանակվում են ԿԸՀ կողմից վեցամյա ժամկետով: Վերջին անգամ դրանք ձևավորվել են 2016թ.: Թեև ընտրական օրենսգրքը հստակ չի սահմանում տարածքային ԸՀ կազմի թարմացում, գործնականում տարածքային ԸՀ

¹¹ ԿԸՀ յոթ անդամներից երեքը կին են՝ ներառյալ նախագահի տեղակալը

¹² Մինչ 2016թ. ԿԸՀ անդամներին նշանակում էր նախագահը

¹³ Հինգ անդամներ՝ ներառյալ նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը առաջին անգամ առաջադրվել են 2011թ.: Մյուս երկու անդամներն առաջին անգամ առաջադրվել են 2014թ. և 2015թ.:

¹⁴ Այլ հիմնական պարտականությունները ներառում են թեկնածուների ցանկի գրանցումը, ստորին մակարդակի ընտրական հանձնաժողովի անդամների կրթումը, միջազգային և տեղական դիտորդների, ինչպես նաև ՋԼՄ ներկայացուցիչների հավատարմագրումը, ընտրարշավի ֆինանսավորման մշտադիտարկումը:

անդամների գործունեության ժամկետը թարմացվող է: Տարածքային ԸՀ-ն իրականացնում է ՏԸՀ-ների գործունեության վերահսկողություն, քննում է վերջիններիս դեմ հարուցված բողոքները, կազմակերպում է վերահաշվարկներ, իրենց ենթակայության տակ գտնվող տարածաշրջանի ընտրության արդյունքները աղյուսակավորում և փոխանցում է ԿԸՀ:

ՏԸՀ-ները յուրաքանչյուր ընտրության համար կազմվող ժամանակավոր մարմիններ են՝ բաղկացած խորհրդարանական խմբերի, ինչպես նաև տարածքային ԸՀ -ների կողմից ընտրված յոթ անդամներից: Այս ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ՏԸՀ կազմված կլինի ութ անդամից, որոնցից երկուսն առաջադրված են համապատասխան տարածքային ԸՀ-ի և երկուսն են ներկայացուցիչ՝ լիազորություններն ավարտող խորհրդարանի երեք դաշինքներից յուրաքանչյուրի կողմից:¹⁵ ՏԸՀ նախագահի և քարտուղարի պաշտոնները բաշխվել են լիազորությունները դադարեցնող խորհրդարանի դաշինքների միջև ըստ այն համամասնության, որով ներկա պահին՝ մայիսի 27-ին, օրենքով սահմանված վերջնաժամկետից չորս օր առաջ, ներկայացված են խորհրդարանում: ԿԸՀ-ի կողմից Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (ԸՀՄՀ) աջակցությամբ ՏԸՀ անդամների վերապատրաստումը նախատեսվում է կազմակերպվել ՏԸՀ-ների ձևավորումից անմիջապես հետո:

Ըստ ՄԱԿ-ի հանձնաժողովի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ ազգային վերջին զեկույցի՝ չնայած ուշագրավ առաջընթացին, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ամբողջական իրացումը դեռևս իրականություն չէ:¹⁶ ԿԸՀ-ն նախատեսում է խթանել տեսողության խնդիր ունեցող անձանց մասնակցությունը ընտրություններին և մշակել է հանրային իրազեկման հոլովակներ՝ ենթազբերով, ինչպես նաև հրատարակել է ընտրողների կրթության և տեղեկացվածության նյութեր Բրայլյան այբուբենով՝ ընտրություններին ընդառաջ ամբողջ երկրով և ընտրության օրը ընտրատեղամասերում տարածելու նպատակով:

VI. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Ընտրությունների օրը 18 տարին լրացած բոլոր քաղաքացիներն ունեն ընտրելու ընրավունք՝ բացառությամբ դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչվածները կամ ծանր հանցագործությունների համար ազատազրկվածները: Մտավոր հաշմանդամության հիմքով ընտրելու իրավունքից զրկելը հակասում է միջազգային պարտավորություններին և չափանիշներին:¹⁷ Ընտրողների գրանցումը պասիվ է. ըստ այդմ ցուցակում ընդգրկվելու համար ընտրողներից որևէ հատուկ ինքնուրույն գործողություն չի պահանջվում:

¹⁵ Եթե խորհրդարանում կան շուրջ հինգ կուսակցություններ և/կամ դաշինքներ, ապա ամեն ֆրակցիա կարող է առաջադրել մեկ ՏԸՀ անդամ:

¹⁶ Տես [ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի](#) կատարման մասին զեկույց (երկրորդ և երրորդ համատեղ ընթացիկ զեկույց), ՀՀ 2020

¹⁷ Ըստ [ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի](#) (CRPD) 12-րդ և 29-րդ հոդվածների <<Կուսակցությունները պետք է ընդունեն, որ հաշմանդամություն ունեցող անձիք կյանքի բոլոր ոլորտներում ունեն հավասար իրավունակություն>> և ապահովեն նրանց <<քվեարկելու և ընտրելու իրավունքը և հնարավորությունը>>: [CRPD 12 հոդվածի N1 հիմնական մեկնաբանության](#) 48-րդ ենթակետը նշում է, որ մարդու՝ որոշում կայացնելու կարողությունը չի կարող արդարացում լինել հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկելու և ընտրության իրավունքի իրացումը բացառելու համար:

Ընտրողների ցանկը կազմվում է Բնակչության պետական ռեգիստրի հիման վրա, որը վարում է ՀՀ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունը, և որը ներառում է ՀՀ-ում միջտապես բնակվող բոլոր ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներին: Մայիսի 13-ի դրությամբ այնտեղ գրանցված էն եղել 2.583.823 ընտրող:

Նախնական ընտրողների ցուցակները հանրային վերահսկողության նպատակով պետք է փակցվեին ընտրատեղամասերում մինչև մայիսի 31-ը: Նույն օրը, ըստ օրենքի պահանջի, ԱՎԿ-ն ընտրողների ամբողջական ռեգիստրը հրապարակել է իր կայքում: Մինչև հունիսի 10-ը ընտրողները կարող են դիմել ուղղումներ կատարելու, իրենց կամ այլ ընտրողների ցուցակում ընդգրկելու կամ ցուցակից հանելու համար: Ընտրողների վերջնական ցուցակը պետք է ընտրատեղամասում փակցված լինի մինչև հունիսի 18-ը: Այն ընտրողները, ովքեր դուրս են մնացել ընտրացուցակից, ինչպես նաև նրանք, ովքեր գտնվում են բժշկական հաստատություններում կամ կալանավայրերում, կարող են ներառվել լրացուցիչ ընտրողների ցուցակում մինչև քվեարկության օրվա ավարտը:

Ընտրությունների օրը ընտրողների նույնականացումը կկատարվի Ընտրողների նույնականացման սարքերով (ԸՆՍ), որոնցում ներբեռնված է տվյալ ընտրատեղամասի ընտրողների ցանկի էլեկտրոնային պատճենը: Ընտրողների նույնականացումը ԸՆՍ-ներով կատարվում է նրանց նույնականացման քարտի կամ մատնահետքի սկանավորման միջոցով: ԿԸՀ-ն տեղեկացրել է ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությանը, 2017թ. ներդրված ԸՆՍ-ներն օգնում են կանխել բազմակի քվեարկության և այլ անձի փոխարեն քվեարկելու ճանապարհով հնարավոր ընտրական խարդախությունները և ընտրողների ցուցակի այլ չարաշահումները և զգալիորեն բարելավել ընտրողների նույնականացման գործընթացի արդյունավետությունը:

Սկսած 2017 թվականից ԿԸՀ-ն քվեարկության հաջորդ օրը հրապարակում է նաև բոլոր ընտրատեղամասերի ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորված տարբերակը՝ հնարավորություն ընձեռելով հանրությանը ստուգել, թե ով է պաշտոնապես քվեարկել: Այս միջոցի հայտարարված նպատակն այն դեպքերի բացահայտումն է, երբ ինչ-որ մեկը քվեարկել է գրանցման վայրից փաստացի հեռու՝ մասնավորապես արտերկրում բնակվող քաղաքացիների փոխարեն:

Ընտրական օրենսգրքի 2021թ. ապրիլյան փոփոխությունները հստակեցնում են, որ ընտրողների ստորագրված ցուցակները պետք է մնան հասանելի առնվազն մինչև ԿԸՀ-ում արդյունքների աղյուսակավորումը կամ, բողոքների ներկայացման դեպքում, մինչ դրանց վերաբերյալ դատավճռի կայացումը:

VII. ԹԵՎՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Խորհրդարանական ընտրությունների համար կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից յուրաքանչյուրը կարող է ներկայացնել թեկնածուների մեկ համապետական փակ ցուցակ, որում ներառված են թվով 80-ից 300 թեկնածու: Կին և տղամարդ ներկայացուցիչների թիվը չպետք է լինի պակաս քան 30 տոկոսը՝ այն պահանջով, որ երկու սեռերն էլ պետք է ներկայացված լինեն կուսակցության ցուցակի իրար հաջորդող եռյակների

անդամների շարքում:¹⁸ Յուրաքանչյուր սեռի 30 տոկոս ներկայացվածության պահանջը աճ է համեմատ նախկին ընտրությունների 25 տոկոսի:

Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: Այլ քաղաքացիություն ունեցող անձինք չեն կարող առաջադրվել որպես պատգամավոր: Դատավորները, դատախազները, ռազմական անձնակազմը, ոստիկանները չեն կարող լինել թեկնածու: Թեկնածուների ցուցակը կարող է ներառել մինչև 30 տոկոս անկուսակացական անդամներ: Ի հեճուկս 1990թ. Կոպենհագենի փաստաթղթի, օրենքը թույլ չի տալիս թեկնածուներին հանդես գալ անհատապես:¹⁹

Ընդհանուր թվով 23 կուսակցություններ և 4 դաշինքներ մինչև մայիսի 29-ի վերջնաժամկետը ԿԸՀ են ներկայացրել իրենց թեկնածուների ցանկը և օժանդակ փաստաթղթերը: ԿԸՀ-ն հրապարակել է ընտրության մասնակիցների ցանկը՝ դրանք ներկայացնելու վերջնաժամկետից անմիջապես հետո: Կուսակցություններին և դաշինքներին տրամադրված է երկու օր ուղղելու թեկնածուների ցանկում ԿԸՀ-ի կողմից հայտնաբերված թերությունները: Մեկ կուսակցություն, որը ցանկացել է գրանցվել թե առանձին, թե դաշինքի կազմում հանել է իր աճանձին գրանցման դիմումը: Մայիսի 31-ին ԿԸՀ-ն գրանցել է մնացած 22 կուսակցությունների և 4 դաշինքների ցուցակները: Փաստաթղթերում առկա թերությունների պատճառով մերժվել է 12 տարբեր թեկնածուների ցուցակներից 26 անհատ թեկնածուների գրանցում: Չորս կուսակցություններ և դաշինքներ գրանցել են ընդհանուր թվով 13 թեկնածու ազգային փոքրամասնությունների համար նախատեսված չորս տեղի համար: Թեկնածուների ցուցակը գրանցելու ԿԸՀ որոշումներից հետո մասնակիցներն ունեն երեք օր դրանք բողոքարկելու համար: Գրանցված կուսակցությունները և դաշինքները պետք է վճարեն 10 մլն. ՀՀ դրամ (EUR 15.700) ընտրական գրավ: Ընտրական գրավը վերադարձվում է, եթե կուսակցությունը կամ դաշինքը խորհրդարանում մանդատներ է ստանում կամ ստանում է վավեր ձայների ավելի քան չորս տոկոսը:

Ընտրություններին մասնակցելու համար գրանցված կուսակցությունների և դաշինքների շարքում են լիազորությունները վայր դնող խորհրդարանում ներկայացված երեք խոշոր կուսակցությունները²⁰, ինչպես նաև կուսակցություններ և դաշինքներ, որոնցում ներգրավված են պետության նախկին (1991-2008թթ. ընկած ժամանակահատվածի) ղեկավարներ:²¹

¹⁸ Հիմնական պահանջը չի վերաբերում ցուցակի ազգային փոքրամասնությունները ներկայացնող թեկնածուներին հատվածին:

¹⁹ 1990թ. Կոպենհագենի փաստաթղթի 7.5 ենթակետը պարտավորեցնում է ԵԱՀԿ մասնակից երկրներին՝ «Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ձգտել քաղաքական կամ հանրային պաշտոնի՝ անհատապես կամ որպես քաղաքական կուսակցության կամ կազմակերպության մաս, առանց խտրականության»:

²⁰ Քաղաքացիական պայմանագիր, Լուսավոր Հայաստան և Բարգավաճ Հայաստան:

²¹ Լևոն Տեր-Պետրոսյան (Հայ ազգային կոնգրես), Ռոբերտ Քոչարյան (Հայաստան դաշինք), Մերժ Սարգսյան (Պատիվ ունեն դաշինք): Պարոն Սարգսյանն անձամբ այս ընտրություններում թեկնածու չէ:

VIII. ՔԱՐՈՉԱՐՉԱՐՇԱՎԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Այս արտահերթ խորհրդարանական ընտրությունների պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածը կրճատվել է (հերթական ընտրությունների համար սահմանված 35-ից 45 օրվա համեմատ)՝ դառնալով 12 օր, ինչը համապատասխանում է ընտրական օրենսգրքին: Այս ընտրությունների քարոզարշավը կմեկնարկի հունիսի 7-ին: Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը արգելվում է: Օրենքը չի արգելում քարոզչական գործունեությունը մինչ պաշտոնական քարոզարշավի շրջանի մեկնարկը: Արդեն իսկ կարելի է տեսնել քարոզչական նյութեր, ինչպիսիք են հեռուստատեսային հոլովակները, գովազդային վահանակները և պաստառները: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդներն ու զրուցակիցները նշել են, որ երկրի ողջ տարածքում իրականացվում է քարոզչական գործունեություն՝ մեծամասամբ առանց COVID-19 համավարակի դեմ անհրաժեշտ միջոցառումների:

Նախաքարոզչական շրջանի քաղաքական դիսկուրսում գերակշռել է ազգային անվտանգության իրավիճակը, իսկ որպես կարևոր երկրորդային խնդիրներ՝ կոռուպցիայի դեմ պայքարը և սոցիալ-տնտեսական վիճակը: Զրուցակիցները նշել են նախաքարոզչական շրջանում անհանդուրժողական, սադրիչ կամ խտրական հռետորաբանության առանձնակի բարձր մակարդակի մասին:

IX. ՔԱՐՈՉԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Քարոզարշավի ֆինանսավորումը գլխավորապես կարգավորվում է Ընտրական օրենսգրքով և «Կուսակցությունների մասին» օրենքով, որոնք նախատեսում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ֆինանսավորման աղբյուրներ: Նախորդ ընտրություններում առնվազն երեք տոկոս քվե ստացած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները ստանում են տարեկան պետական ֆինանսավորման իրավունք:²²

Ընտրություններին մասնակցող կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները պարտավոր են բացել հատուկ բանկային հաշիվ քարոզչության ֆինանսավորման գործարքների համար, որոնք կարող են ներառել մուծումներ ընտրողների կողմից, ինչպես նաև թեկնածուների նախընտրական հիմնադրամներից և կուսակցություններից:²³ Առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններից, ինչպես նաև օտարերկրյա և անանուն աղբյուրներից մուծումները չեն թույլատրվում:²⁴ Ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի քարոզչական ծախսերի

²² 2018թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքների հիման վրա պետական բյուջեից ֆինանսավորում են ստանում հետևյալ կուսակցություններն ու դաշինքները. Իմ քայլը, Բարգավաճ Հայաստան, Լուսավոր Հայաստան, Հայաստանի հանրապետական կուսակցություն և Հայ հեղափոխական դաշնակցություն:

²³ Համապատասխանաբար մինչև 500 000 դրամ (մոտ՝ 790 եվրո), 5 միլիոն դրամ (մոտ՝ 7 900 եվրո) և 100 միլիոն դրամ (մոտ՝ 157 000 եվրո): 1 եվրոն կազմում է մոտավորապես 635 դրամ:

²⁴ Արգելված աղբյուրներից ստացված, ինչպես նաև սահմանաչափը գերազանցող մուծումները փոխանցվում են պետական բյուջե:

օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափը կազմում է մինչև 500 միլիոն հայկական դրամ (մոտ՝ 788 000 եվրո):

ԿՀՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը վերահսկում է մրցակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից քարոզչության ֆինանսավորումը կարգավորող օրենսդրության պահպանումը: Արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները պարտավոր են ներկայացնել նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ երկու հայտարարագիր, առաջինը՝ քվեարկության օրվանից 10 օր առաջ, իսկ երկրորդը՝ ընտրությունների արդյունքների ամփոփման ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվում են ԿՀՀ-ի համացանցային կայքում:

2020թ. դեկտեմբերին «Կուսակցությունների մասին» օրենքում կատարվել են փոփոխություններ, այդ թվում՝ կուսակցությունների քարոզչության ֆինանսավորման մասով: Այնուամենայնիվ, քարոզչության ֆինանսավորմանն առնչվող փոփոխված դրույթները, այդ թվում՝ ԿՀՀ-ից ֆինանսական վերահսկողության գործառույթների փոխանցումը Հակակոռուպցիոն հանձնաժողովին և քարոզչական ծախսերի իրավական սահմանման ընդլայնումը, ուժի մեջ կմտնեն միայն 2022թ. հունվարի 1-ից, Ընտրական օրենսգրքի համապատասխան դրույթների հետ միաժամանակ:²⁵

X. ԶԼՄ-ՆԵՐ

Մեդիա միջավայրը ներառում է 26 հեռուստաալիքներ (այդ թվում վեցը՝ համապետական ծածկույթով), 24 ռադիոկայաններ, 35-ը գերազանցող պարբերական տպագիր հրատարակություններ և ավելի քան 200 առցանց լրատվական պորտալներ:²⁶ Հեռուստատեսությունը մնում է քաղաքական տեղեկատվության ամենակարևոր աղբյուրը՝ հատկապես մայրաքաղաքից դուրս: Առցանց լրատվամիջոցների, մասնավորապես սոցիալական ցանցերի դերն արագորեն աճում է: Ֆեյսբուքը և Յություբը քաղաքական տեղեկատվության փոխանակման կարևոր հարթակ են դարձել:

Խոսքի ազատության հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունները վերջին տարիներին Հայաստանում լրատվամիջոցների ընդհանուր ազատության բարելավումներ են նկատել: Խոսքի ազատությունը երաշխավորված է Սահմանադրությամբ: Զրպարտությունը ապաքրեականացվել է 2010 թ.: Այնուամենայնիվ, Քաղաքացիական օրենսգրքի 2021թ. կատարված փոփոխությամբ զգալիորեն մեծացել է վիրավորանքի և զրպարտության դեպքում նյութական վնասի հատուցման առավելագույն չափը: Այս փոփոխությունը քննադատության է արժանացել ԶԼՄ-ներին առնչվող բազմաթիվ

²⁵ Ըստ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ գրուցակիցների, օրենքի ընդունումից մինչև դրա ուժի մեջ մտնելն ընկած պատշաճ ժամանակահատվածի սահմանումը (vacatio legis) հիմնված է եղել հաջորդ հերթական խորհրդարանական ընտրությունների ժամանակացույցի վրա:

²⁶ Հեռարձակողների քանակը տրամադրվել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (ՀՌՀ) կողմից, իսկ տպագիր և առցանց լրատվամիջոցների քանակը ներկայացված է [Այրեքս-ի «Մեդիա կայունության ինդեքս 2019: Հայաստան»](#) զեկույցում:

կազմակերպությունների կողմից, և նախագահն այն ուղարկել է Սահմանադրական դատարան՝ վերանայման:

Հանրային հեռուստաընկերությունը, որը ֆինանսավորվում է պետական բյուջեից, շարունակում է ընկալվել որպես կառավարամետ խմբագրական քաղաքականությամբ լրատվական: Մինևույն ժամանակ, ԵԱԿՀ ԺՀՄԻԳ-ի շատ գրուցակիցներ անհանգստություն են հայտնել առ այն, որ մասնավոր հեռարձակողների քաղաքական պատկանելիությունը կարող է ընտրությունների կողմնակալ լուսաբանման վտանգ առաջացնել: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի շատ գրուցակիցներ նաև նշել են լրատվամիջոցների հանդեպ աճող անվստահության մասին, որը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղում և դրա շուրջ վերջերս տեղի ունեցած պատերազմի լուսաբանմամբ: Ի լրումն, որոշ շահառուներ նշել են, որ առցանց լրատվամիջոցներում և սոցիալական մեդիա հարթակներում նախընտրական քարոզչության անցկացման կարգի վերաբերյալ կարգավորումների բացակայությունը կարող է նպաստել ապատեղեկատվության, անհանդուրժողական և սադրիչ հռետորաբանության տարածմանը:

Թեկնածուների գրանցումից հետո ԿԸՀ-ն պարտավոր է ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին հատկացնել 30 րոպե անվճար եթերաժամանակ 21 հանրային հեռուստատեսությամբ, և 60 րոպե հանրային ռադիոյով՝ փրայմ-թայմի ընթացքում: Բացի այդ, յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գնելու մինչև 60 րոպե վճարովի գովազդ հանրային հեռուստատեսությամբ, և մինչև 90 րոպե՝ հանրային ռադիոյով:²⁷ Համաձայն ընտրական օրենսգրքի՝ բոլոր հեռարձակողների լրատվական հաղորդումներում ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական քարոզարշավի վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն:

Լրատվամիջոցների կողմից նախընտրական քարոզչությանն առնչվող իրավական դրույթների կատարման վերահսկողությունն իրականացնում է լրատվամիջոցների կարգավորողը՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌՀ), այդ թվում սեփական մեդիա մոնիթորինգի միջոցով:²⁸ Խախտումների դեպքում ՀՌՀ-ն կարող է նախազգուշացումներ տալ կամ տուգանքներ կիրառել:

²⁷ Ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու դաշինքները կարող են նաև վճարովի քաղաքական գովազդ տեղադրել մասնավոր հեռարձակող և տպագիր մամուլում, ինչպես նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածում, այնպես էլ դրանից առաջ:

²⁸ Մայիսի 27-ին, օրենքով սահմանված ժամկետում, ՀՌՀ-ն ընդունել է ՁԼՄ-ների մշտադիտարկման իր մեթոդաբանությունը, որը հանրությանը հասանելի է [ՀՌՀ կայքում](#), ինչպես նաև [ԿԸՀ կայքում](#): / Պահպանելով օրենքով սահմանված ժամկետը՝ ՀՌՀ-ն Մայիսի 27-ին ընդունել է ՁԼՄ-ների մշտադիտարկման իր մեթոդաբանությունը, որը հանրության համար հասանելի է [ՀՌՀ կայքում](#), ինչպես նաև [ԿԸՀ կայքում](#):

Մայիսի 24-ին ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն մեկնարկել է իր մեդիա մոնիթորինգը՝ յոթ հեռուստատալիքների, մեկ ռադիոկայանի և երեք առցանց լրատվամիջոցների քանակական և որակական վերլուծությամբ:²⁹

XI. ԲՈՂՈՔՆԵՐ և ԴԻՄՈՒՄՆԵՐ

Ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողովներում, իսկ ԿԸՀ-ի դեմ բողոքները ընդդատյա են վարչական դատարանին: Ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ բողոքները կարող են ներկայացվել ԱՎՎ, որի որոշումն էլ կարող է բողոքարկվել շրջանային դատարանում: Ընտրական վեճերի հետ կապված բողոքները նույնպես կարող են ներկայացվել նաև դատարաններ, սակայն ընտրական հանձնաժողովների և դատարանների կողմից բողոքների զուգահեռ քննումը արգելվում է Ընտրական օրենսգրքով, և առաջությունը տրվում է դատական գործընթացներին: Որոշ բացառություններով, բողոքարկման իրավունքը վերապահվում է միայն նրանց, ում սուբյեկտիվ ընտրական իրավունքը խախտվել է կամ կարող է խախտվել:³⁰

Ձայների հաշվարկի ընթացքում ներկա թեկնածուներն ու վստահված անձինք, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները կարող են տեղամասի քվեարկության արդյունքները վիճարկել վերադաս տարածքային ընտրական հանձնաժողովում, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը բողոքարկել ԿԸՀ-ում կամ վարչական դատարանում: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի ոչ մի զրուցակից դեռևս անհանգստություն չի հայտնել նախընտրական բողոքների և դիմումների քննման ժամկետների առնչությամբ: Մինևույն ժամանակ, որոշ զրուցակիցներ նշել են, որ ընտրությունների արդյունքների հաստատման յոթնօրյա ժամկետն ազդում է հետընտրական վեճերի լուծման վերջնաժամկետների վրա, քանի որ արդյունքների հետ կապված բոլոր բողոքներն ու դիմումները պետք է քննվեն այդ ժամկետում:³¹ Միայն ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններն ու դաշինքները կարող են բողոքարկել ընտրությունների վերջնական արդյունքները Սահմանադրական

²⁹ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն իրականացնում է Հ1 (հանրային հեռուստատեսություն), ATV, Արմենիա TV, Կենտրոն TV, Շանթ TV և Երկիր Մեդիա (մասնավոր հեռուստատալիքներ), ինչպես նաև Երևանում գործունեություն իրականացնող Արմնյուզ հեռուստատալիքների փրայմ թայմի ժամանակահատվածում հեռարձակումների (18:00-ից մինչև 24:00) մոնիթորինգ: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն իրականացնում է նաև Հանրային ռադիոյի, ինչպես նաև www.azatutyun.am, www.news.am, և www.lin.am առցանց լրատվամիջոցների քաղաքական բովանդակությամբ հոդվածների մշտադիտարկում:

³⁰ Ընտրողները, լրատվամիջոցների ներկայացուցիչները և դիտորդները կարող են բողոք ներկայացնել իրենց իրավունքների ոտնահարման վերաբերյալ, իսկ կուսակցությունների վստահված անձինք և հանձնաժողովի անդամները՝ ինչպես իրենց, այնպես էլ կուսակցությունների, թեկնածուների և այլ շահառուների իրավունքների ոտնահարման վերաբերյալ:

³¹ Հետընտրական վեճերի համար սահմանված յոթնօրյա ժամկետն ընկնում է քվեարկության օրվա և ընտրությունների արդյունքների հաստատման միջև, ինչը նշանակում է, որ բոլոր բողոքները պետք է ներկայացվեն, քննվեն, դրանց մասով որոշումները պետք է կայացվեն և վերադաս ատյանի դատարաններում բողոքարկումները պետք է քննվեն նշված ժամանակահատվածում:

դատարանում, որը պետք է որոշում կայացնի դիմումի ներկայացումից հետո 15 օրվա ընթացքում:

ԿԸՀ-ն տեղեկացրել է ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ դեռևս չի ստացել բողոքներ, սակայն ստացել է մի շարք տեղեկատվություն ստանալու հարցումներ, որոնց մեծ մասին արդեն պատասխանել է:³² COVID-19 համավարակի պայմաններում դիմումատուների համար հասանելիություն ապահովելու համար ԿԸՀ-ն թույլ է տալիս բողոքները ներկայացնել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով:³³ Վարչական դատարանը բողոքներ է ստացել երկու հնարավոր թեկնածուներից, ում մերժվել էր թեկնածուի գրանցման համար անհրաժեշտ կացության կամ քաղաքացիության վկայականների տրամադրումը: Մի դեպքում դատարանը որոշում է կայացրել հօգուտ դիմումատուի,³⁴ մյուս դեպքում մերժել է բողոքի բավարարումը:

XII. ՔՀԿ և ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

Իրավական դաշտը սահմանում է միջազգային և տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ընտրությունների դիտարկման հնարավորություն և թույլատրում է կուսակցությունների վստահված անձանց ընտրությունների օրը ներկա գտնվել տեղամասային կենտրոններում: Հավատարմագրվելու համար, ՔՀԿ-ները պետք է ընդունեն վարքագծի ներքին կանոնակարգեր և անցկացնեն դասընթացներ իրենց դիտորդների համար: Ի լրումն, նրանցից պահանջվում է իրենց կանոնադրության մեջ ունենալ ժողովրդավարությանը և մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող ուղիղ նպատակներ՝ դիտարկվող ընտրությունների մասին հայտարարությունից առնվազն մեկ տարի առաջ:³⁵

Մայիսի 31-ի դրությամբ ԿԸՀ-ն հավատարմագրել է 1 քաղաքացիական դիտորդական կազմակերպություն, 1 միջազգային կազմակերպություն և 18 դիվանագիտական ներկայացուցչություններ՝ այս ընտրությունները դիտարկելու համար: Որոշ քաղաքացիական դիտորդական խմբեր մտավախություն են հայտնել առ այն, որ հավատարմագրման հայտեր ներկայացնելու համար սահմանված սուղ ժամկետը, այն է՝ ընտրության օրվանից 15 օր առաջ, բարդացնում է դիտորդների հավաքագրումը: Ընտրական տեղամասերում գերբեռնվածությունից խուսափելու համար կարող են կիրառվել ընտրական տեղամասերում քաղաքացիական դիտորդների և լրատվամիջոցների

³² ԿԸՀ-ն տեղեկացրել է ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ որոշ նամակների, մասնավորապես՝ տեղամասերի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հայցերի պատասխաններն ուղարկվելու են ընտրական գործընթացի ավելի ուշ փուլում, երբ հայցվող տեղեկատվությունը հասանելի կլինի:

³³ ԿԸՀ-ն փորձարկել է բողոքների ներկայացման էլեկտրոնային համակարգը 2020թ. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում:

³⁴ Կատարելով այդ գործով դատարանի վճիռը՝ ԱՎԿ-ն տրամադրել է բնակության վկայական, սակայն կարճ ժամանակ անց այն անվավեր է ճանաչել: Թեկնածուն բողոքարկել է ԱՎԿ-ի՝ վկայականն անվավեր ճանաչելու մասին որոշումը, սակայն չեղարկել է բողոքարկումը թեկնածուների գրանցման վերջնաժամկետից անմիջապես առաջ: Ի վերջո, թեկնածուն ԱՎԿ-ից ստացել է կացության վկայական և գրանցվել է ընտրություններին մասնակցելու համար:

³⁵ Մայիսի 29-ին «Ռեսուրսների կենտրոն» բարեգործական ՀԿ-ի հավատարմագրումը մերժվել է՝ սույն պահանջը չբավարարելու պատճառով:

ներկայացուցիչների թվի սահմանափակումներ: Նման որոշումները չեն կարող սահմանափակել տեղամասում ներկա դիտորդների ընդհանուր թիվը 15-ից պակասի:

XIII. ԺՀՄԻԳ ԸՂԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն պաշտոնապես բացվել է Երևանում մայիսի 18-ին և նախնական մամլո ասուլիս է անցկացրել մայիսի 19-ին: Առաքելության ղեկավարը հանդիպումներ է ունեցել ԿՀՀ նախագահի, Արտաքին գործերի նախարարության փոխնախարարի և կուսակցությունների ներկայացուցիչների հետ: ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն կանոնավոր կապեր է հաստատել ԿՀՀ-ի, ընտրական գործընթացներում ներգրավված պետական հաստատությունների, դատական համակարգի, կուսակցությունների, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվամիջոցների, դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային հանրության հետ:

*Սույն զեկույցի անգլերեն թարգմանությունը միակ պաշտոնական փաստաթուղթն է:
Հայերենով առկա փաստաթուղթը հանդիսանում է ոչ պաշտոնական թարգմանություն:*